**Արձանագրություն N 2**

***ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-17/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

23.02.2017 թ.
ժամը՝ 12:30

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հ.Մուշեղյան
Ա. Ավալյան
Գ.Զաքարյան
Հ.Խեչումյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մաղաքյան

**1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով հայտերի բացման մասին**

(Հ.Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1 | «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ | էլ հասցե՝ <<info@fleshmotors.am>> |
| 2 | «Ավտոսերվիս-1 » ՍՊԸ | էլ հասցե՝ autoserviceno1@gmail.com |
| 3 | «Գարանտսերվիս» ՍՊԸ | |

1.2 «Ֆլեշ Մոթորս», «Ավտոսերվիս-1», ՍՊԸ-ները կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան հայտ պարունակող ծրարներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.3 «Գարանտսերվիս», ՍՊԸ-ի կողմից <<www.armeps.am>> էլեկտրոնային համակարգ կցված հայտը բացակայում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.4 «Ֆլեշ Մոթորս», «Ավտոսերվիս-1», ՍՊԸ-ների բացված յուրաքանչյուր ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.5 «Ֆլեշ Մոթորս», «Ավտոսերվիս-1», ՍՊԸ-ների առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշները համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.6 «Ֆլեշ Մոթորս», «Ավտոսերվիս-1», ՍՊԸ-ների ներկայացրած գնային առաջարկները՝ համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.7 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են՝

| Նախահաշվային գին | Մասնակցի անվանումը | | Առաջարկված գինը ՀՀ դրամով | |
|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ն ներառյալ |
| Չափաբաժին 1 | նախարարության աշխատակազմ | | | |
| 567 000 | 1 | «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ | 233 125 | 279 750 |
| | 2 | «Ավտոսերվիս-1» ՍՊԸ | 274 000 | - |
| Չափաբաժին 2 | նախարարի աշխատակազմ | | | |
| 520 000 | 1 | «Ավտոսերվիս-1» ՍՊԸ | 592 000 | - |
| | 2 | «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ | 618 125 | 741 750 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.7 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.8 Հանձնաժողովը որոշեց՝ «Ֆլեշ Մոթորս» «Ավտոսերվիս-1» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, իսկ «Գարանտսերվիս», ՍՊԸ-ին գնահատել անբավարար՝ մասնակցի կողմից <<www.armeps.am>> էլեկտրոնային համակարգում հայտը բացակայելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.9 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ֆլեշ Մոթորս» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ավտոսերվիս-1» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.10 Հիմք ընդունելով "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Հ.Մարտիրոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց <<ՀՀՄՆ-ՇՀԾՁԲ-17/4>> ծածկագրով ՇՀ ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցնող մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը՝ 10:00-ին, ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք 6-րդ հարկ հասցեում ՀՀ մշակույթի նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | Հ.Մարտիրոսյան | |
| Անդամներ՝ | Հ.Մուշեղյան | |
| | Ա. Ավալյան | |
| | Գ.Զաքարյան | |
| | Հ.Խեչումյան | |

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մաղաքյան